ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀ-ՊԵԿ-ՀՄԱԱՊՁԲ-26/27-Ա

ք.Երևան «20» 04 2026թ.

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն, ի դեմս ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղար Դ. Մաթևոսյանի, որը գործում է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «ՆԱՐ-ԱՌ» ՍՊԸ-ը, ի դեմս տնօրեն Ա. Շահինյանի, որը գործում է «ՆԱՐ-ԱՌ» ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 3 709 490 (երեք միլիոն յոթ հարյուր ինը հազար չորս հարյուր ինսուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:[1] Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում գնորդը վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

---

[1] *Եթե Վաճառողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

5.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.4 Եթե պայմանագրի 5.3 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում

գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.12 Վաճառողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում գնորդը վճարումներն իրականացնելիս ապահովի վաճառողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում գնորդը պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է գնորդի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը

8.13 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.14 Պայմանագիրը կազմված է 19 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3, N 3.1 և N 4 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.15 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ

ՀՀ պետական եկամուտների կոմիտե
ք. Երևան, Մ. Խորենացի 3,7
ՀՎՀՀ 02647057
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական
վարչություն
Հ/Հ 900011054013
ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր
քարտուղար

Դ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ _____
/ստորագրություն/

Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

«ՆԱՐ-ԱՌ» ՍՊԸ
ք. Երևան, Սևանի 5/1
ՀՎՀՀ 01542102
Արարատբանկ ԲԲԸ

Հ/Հ 1510019896320100
Տնօրեն

Ա. ՇԱՀԻՆՅԱՆ _____
/ստորագրություն/

Կ.Տ.

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
«20» 04 2026 թ. կնքված
ՀՀ-ՊԵԿ-ՀՄԱՊՁԲ-26/27-Ա ծածկագրով գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Ապրանքի									
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	անվանումը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը ՀՀ դրամ	ընդհանուր գինը ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման		
							հասցեն	ենթակա քանակը	Ժամկետը***
1	Կենցաղային և հանրային սննդի նյութեր 1 CPV 39812600/1	Հեղուկ Domestos 1250 մլ/ winter freshness	հատ	1 305	167 040	128	ՀՀ ՊԵԿ, Խորենացի 3,7	128	Գնման գործընթացի արդյունքում կնքվելիք գնման պայմանագրով նախատեսված պայմանները տարածել 2026 թվականի մարտի 27-ից ծագած հարաբերությունների վրա:
2	Կենցաղային և հանրային սննդի նյութեր 2 CPV 39812600/3	Հեղուկ Domestos 1250 մլ/ atlantic freshness	հատ	1 305	83 520	64	ՀՀ ՊԵԿ, Խորենացի 3,7	64	Գնման գործընթացի արդյունքում կնքվելիք գնման պայմանագրով նախատեսված պայմանները տարածել 2026 թվականի մարտի 27-ից ծագած հարաբերությունների վրա:
3	Կենցաղային և հանրային սննդի նյութեր 3 CPV 39812600/2	Հեղուկ Domestos 1250 մլ/ coniferous freshness	հատ	1 305	83 520	64	ՀՀ ՊԵԿ, Խորենացի 3,7	64	Գնման գործընթացի արդյունքում կնքվելիք գնման պայմանագրով նախատեսված պայմանները տարածել 2026 թվականի մարտի 27-ից ծագած հարաբերությունների վրա:
4	Կենցաղային և հանրային սննդի նյութեր 4 CPV 33711480/6	Հեղուկ օճառ Bio Shine Cristal 5լ/ Ծովային	հատ	1 300	65 000	50	ՀՀ ՊԵԿ, Խորենացի 3,7	50	Գնման գործընթացի արդյունքում կնքվելիք գնման պայմանագրով նախատեսված պայմանները տարածել 2026 թվականի մարտի 27-ից ծագած հարաբերությունների վրա:

5	Կենցաղային և հանրային սննդի նյութեր 5 CPV 33711480/3	Հեղուկ օճառ Bio Shine Cristal 5լ/ Մրգային	հատ	1 300	65 000	50	ՀՀ ՊԵԿ, Խորենացի 3,7	50	Գնման գործընթացի արդյունքում կնքվելիք գնման պայմանագրով նախատեսված պայմանները տարածել 2026 թվականի մարտի 27-ից ծագած հարաբերությունների վրա:
6	Կենցաղային և հանրային սննդի նյութեր 6 CPV 33711480/5	Հեղուկ օճառ Bio Shine Cristal 5լ/ Bubble gum	հատ	1 300	52 000	40	ՀՀ ՊԵԿ, Խորենացի 3,7	40	Գնման գործընթացի արդյունքում կնքվելիք գնման պայմանագրով նախատեսված պայմանները տարածել 2026 թվականի մարտի 27-ից ծագած հարաբերությունների վրա:
7	Կենցաղային և հանրային սննդի նյութեր 7 CPV 33711480/4	Հեղուկ օճառ Bio Shine Cristal 5լ/ Խնձոր	հատ	1 300	65 000	50	ՀՀ ՊԵԿ, Խորենացի 3,7	50	Գնման գործընթացի արդյունքում կնքվելիք գնման պայմանագրով նախատեսված պայմանները տարածել 2026 թվականի մարտի 27-ից ծագած հարաբերությունների վրա:
8	Կենցաղային և հանրային սննդի նյութեր 8 CPV 33711480/7	Հեղուկ օճառ Bio Shine Cristal 5լ/ Ծաղկային	հատ	1 300	13 000	10	ՀՀ ՊԵԿ, Խորենացի 3,7	10	Գնման գործընթացի արդյունքում կնքվելիք գնման պայմանագրով նախատեսված պայմանները տարածել 2026 թվականի մարտի 27-ից ծագած հարաբերությունների վրա:
9	Կենցաղային և հանրային սննդի նյութեր 9 CPV 39811300/10	Օդափոխիչ Gold Wind 300մլ/ Exotic	հատ	410	15 580	38	ՀՀ ՊԵԿ, Խորենացի 3,7	38	Գնման գործընթացի արդյունքում կնքվելիք գնման պայմանագրով նախատեսված պայմանները տարածել 2026 թվականի մարտի 27-ից ծագած հարաբերությունների վրա:
10	Կենցաղային և հանրային սննդի նյութեր 10 CPV 39811300/5	Օդափոխիչ Gold Wind 300մլ/ green grass	հատ	410	15 580	38	ՀՀ ՊԵԿ, Խորենացի 3,7	38	Գնման գործընթացի արդյունքում կնքվելիք գնման պայմանագրով նախատեսված պայմանները տարածել 2026 թվականի մարտի 27-ից ծագած հարաբերությունների վրա:

11	Կենցաղային և հանրային սննդի նյութեր 11 CPV 39811300/6	Օդափոխիչ Gold Wind 300մլ/ after rain	հատ	410	15 580	38	ՀՀ ՊԵԿ, Խորենացի 3,7	38	Գնման գործընթացի արդյունքում կնքվելիք գնման պայմանագրով նախատեսված պայմանները տարածել 2026 թվականի մարտի 27-ից ծագած հարաբերությունների վրա:
12	Կենցաղային և հանրային սննդի նյութեր 12 CPV 39811300/11	Օդափոխիչ Gold Wind 300մլ/ green cocktail	հատ	410	15 580	38	ՀՀ ՊԵԿ, Խորենացի 3,7	38	Գնման գործընթացի արդյունքում կնքվելիք գնման պայմանագրով նախատեսված պայմանները տարածել 2026 թվականի մարտի 27-ից ծագած հարաբերությունների վրա:
13	Կենցաղային և հանրային սննդի նյութեր 13 CPV 39811300/12	Օդափոխիչ Gold Wind 300մլ/ citrus	հատ	410	15 580	38	ՀՀ ՊԵԿ, Խորենացի 3,7	38	Գնման գործընթացի արդյունքում կնքվելիք գնման պայմանագրով նախատեսված պայմանները տարածել 2026 թվականի մարտի 27-ից ծագած հարաբերությունների վրա:
14	Կենցաղային և հանրային սննդի նյութեր 14 CPV 39811300/4	Օդափոխիչ Gold Wind 300մլ/ green apple	հատ	410	15 580	38	ՀՀ ՊԵԿ, Խորենացի 3,7	38	Գնման գործընթացի արդյունքում կնքվելիք գնման պայմանագրով նախատեսված պայմանները տարածել 2026 թվականի մարտի 27-ից ծագած հարաբերությունների վրա:
15	Կենցաղային և հանրային սննդի նյութեր 15 CPV 39811300/8	Օդափոխիչ Gold Wind 300մլ/ coniferous	հատ	410	15 580	38	ՀՀ ՊԵԿ, Խորենացի 3,7	38	Գնման գործընթացի արդյունքում կնքվելիք գնման պայմանագրով նախատեսված պայմանները տարածել 2026 թվականի մարտի 27-ից ծագած հարաբերությունների վրա:
16	Կենցաղային և հանրային սննդի նյութեր 16 CPV 39811300/7	Օդափոխիչ Gold Wind 300մլ/ grapefruit	հատ	410	15 580	38	ՀՀ ՊԵԿ, Խորենացի 3,7	38	Գնման գործընթացի արդյունքում կնքվելիք գնման պայմանագրով նախատեսված պայմանները տարածել 2026 թվականի մարտի 27-ից ծագած հարաբերությունների վրա:

17	Կենցաղային և հանրային սննդի նյութեր 17 CPV 39811300/3	Օդափոխիչ Gold Wind 300մլ/ mango&kiwi	հատ	410	15 580	38	ՀՀ ՊԵԿ, Խորենացի 3,7	38	Գնման գործընթացի արդյունքում կնքվելիք գնման պայմանագրով նախատեսված պայմանները տարածել 2026 թվականի մարտի 27-ից ծագած հարաբերությունների վրա:
18	Կենցաղային և հանրային սննդի նյութեր 18 CPV 39811300/13	Օդափոխիչ Gold Wind 300մլ/ ocean	հատ	410	15 580	38	ՀՀ ՊԵԿ, Խորենացի 3,7	38	Գնման գործընթացի արդյունքում կնքվելիք գնման պայմանագրով նախատեսված պայմանները տարածել 2026 թվականի մարտի 27-ից ծագած հարաբերությունների վրա:
19	Կենցաղային և հանրային սննդի նյութեր 19 CPV 39811300/9	Օդափոխիչ Gold Wind 300մլ/ floral blues	հատ	410	15 580	38	ՀՀ ՊԵԿ, Խորենացի 3,7	38	Գնման գործընթացի արդյունքում կնքվելիք գնման պայմանագրով նախատեսված պայմանները տարածել 2026 թվականի մարտի 27-ից ծագած հարաբերությունների վրա:
20	Կենցաղային և հանրային սննդի նյութեր 20 CPV 39812600/4	Լվացքի փոշի ավտո. Sargis 5կգ	հատ	1 585	85 590	54	ՀՀ ՊԵԿ, Խորենացի 3,7	54	Գնման գործընթացի արդյունքում կնքվելիք գնման պայմանագրով նախատեսված պայմանները տարածել 2026 թվականի մարտի 27-ից ծագած հարաբերությունների վրա:
21	Կենցաղային և հանրային սննդի նյութեր 21 CPV 18931180/1	Տոպրակ տնտես. պ/է Avikomp 10h. 30 մկմ 120լ	հատ	865	214 520	248	ՀՀ ՊԵԿ, Խորենացի 3,7	248	Գնման գործընթացի արդյունքում կնքվելիք գնման պայմանագրով նախատեսված պայմանները տարածել 2026 թվականի մարտի 27-ից ծագած հարաբերությունների վրա:
22	Կենցաղային և հանրային սննդի նյութեր 22 CPV 33141156/1	Ձեռնոց ռետինե Household Gloves S/M/L/XL	հատ	160	8 000	50	ՀՀ ՊԵԿ, Խորենացի 3,7	50	Գնման գործընթացի արդյունքում կնքվելիք գնման պայմանագրով նախատեսված պայմանները տարածել 2026 թվականի մարտի 27-ից ծագած հարաբերությունների վրա:

23	Կենցաղային և հանրային սննդի նյութեր 23 CPV 39812600/5	Ժավելի սպիրտ Brilias 5լ	հատ	485	41 710	86	ՀՀ ՊԵԿ, Խորենացի 3,7	86	Գնման գործընթացի արդյունքում կնքվելիք գնման պայմանագրով նախատեսված պայմանները տարածել 2026 թվականի մարտի 27-ից ծագած հարաբերությունների վրա:
24	Կենցաղային և հանրային սննդի նյութեր 24 CPV 18931180/2	Տոպրակ շինաղբի պ/է Avikomp 5h. 240լ	հատ	1 075	10 750	10	ՀՀ ՊԵԿ, Խորենացի 3,7	10	Գնման գործընթացի արդյունքում կնքվելիք գնման պայմանագրով նախատեսված պայմանները տարածել 2026 թվականի մարտի 27-ից ծագած հարաբերությունների վրա:
25	Կենցաղային և հանրային սննդի նյութեր 25 CPV 33761100/5	Զուգարանի թուղթ Veiro 170m., 1 h 2շ	հատ	855	471 960	552	ՀՀ ՊԵԿ, Խորենացի 3,7	552	Գնման գործընթացի արդյունքում կնքվելիք գնման պայմանագրով նախատեսված պայմանները տարածել 2026 թվականի մարտի 27-ից ծագած հարաբերությունների վրա:
26	Կենցաղային և հանրային սննդի նյութեր 26 CPV 39522330/2	Կտոր Միկրոֆիբրա հատակի Sonax 50*80սմ կապույտ	հատ	750	168 000	224	ՀՀ ՊԵԿ, Խորենացի 3,7	224	Գնման գործընթացի արդյունքում կնքվելիք գնման պայմանագրով նախատեսված պայմանները տարածել 2026 թվականի մարտի 27-ից ծագած հարաբերությունների վրա:
27	Կենցաղային և հանրային սննդի նյութեր 27 CPV 33141156/2	Ձեռնոց ռետինե M/L/XL	հատ	175	39 200	224	ՀՀ ՊԵԿ, Խորենացի 3,7	224	Գնման գործընթացի արդյունքում կնքվելիք գնման պայմանագրով նախատեսված պայմանները տարածել 2026 թվականի մարտի 27-ից ծագած հարաբերությունների վրա:
28	Կենցաղային և հանրային սննդի նյութեր 28 CPV 39522330/3	Կտոր Միկրոֆիբրա 30*30սմ փոքր	հատ	145	41 760	288	ՀՀ ՊԵԿ, Խորենացի 3,7	288	Գնման գործընթացի արդյունքում կնքվելիք գնման պայմանագրով նախատեսված պայմանները տարածել 2026 թվականի մարտի 27-ից ծագած հարաբերությունների վրա:

29	Կենցաղային և հանրային սննդի նյութեր 29 CPV 39812600/6	Հեղուկ մաքրող S/Chistol 5լ, universal	հատ	2 650	153 700	58	ՀՀ ՊԵԿ, Խորենացի 3,7	58	Գնման գործընթացի արդյունքում կնքվելիք գնման պայմանագրով նախատեսված պայմանները տարածել 2026 թվականի մարտի 27-ից ծագած հարաբերությունների վրա:
30	Կենցաղային և հանրային սննդի նյութեր 30 CPV 33141170/4	Տոպրակ աղբի պ/է Avikomp 30h, 30լ	հատ	270	240 840	892	ՀՀ ՊԵԿ, Խորենացի 3,7	892	Գնման գործընթացի արդյունքում կնքվելիք գնման պայմանագրով նախատեսված պայմանները տարածել 2026 թվականի մարտի 27-ից ծագած հարաբերությունների վրա:
31	Կենցաղային և հանրային սննդի նյութեր 31 CPV 33761100/6	Զուգարանի թուղթ Silk Soft 32h, 3$_2$	հատ	3 560	1 181 920	332	ՀՀ ՊԵԿ, Խորենացի 3,7	332	Գնման գործընթացի արդյունքում կնքվելիք գնման պայմանագրով նախատեսված պայմանները տարածել 2026 թվականի մարտի 27-ից ծագած հարաբերությունների վրա:
32	Կենցաղային և հանրային սննդի նյութեր 32 CPV 39522250/1	Աղբահավաք Arix երկար 1h	հատ	1 000	132 000	132	ՀՀ ՊԵԿ, Խորենացի 3,7	132	Գնման գործընթացի արդյունքում կնքվելիք գնման պայմանագրով նախատեսված պայմանները տարածել 2026 թվականի մարտի 27-ից ծագած հարաբերությունների վրա:
33	Կենցաղային և հանրային սննդի նյութեր 33 CPV 39221410/2	Ավել հասարակ ուզբեկական	հատ	1 070	154 080	144	ՀՀ ՊԵԿ, Խորենացի 3,7	144	Գնման գործընթացի արդյունքում կնքվելիք գնման պայմանագրով նախատեսված պայմանները տարածել 2026 թվականի մարտի 27-ից ծագած հարաբերությունների վրա:

Այլ պայմաններ՝

***Կատարողի կողմից մատակարարվող նյութերը պետք է լինեն նոր և բարձրորակ:**

****Գնումների մասնակցության իրավունքը և որակավորման չափանիշները՝ համաձայն գործող օրենսդրության:**

*****Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 23-րդ կետի 8-րդ ենթակետի գնման առարկան որակվում է որպես ապրանք:**

ԳՆՈՐԴ

ՀՀ պետական եկամուտների կոմիտե
ք. Երևան, Մ. Խորենացի 3,7
ՀՎՀՀ 02647057
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011054013
ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղար

Դ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ _____
/ստորագրություն/

Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

«ՆԱՐ-ԱՌ» ՍՊԸ
ք. Երևան, Սևանի 5/1
ՀՎՀՀ 01542102
Արարատբանկ ԲԲԸ

Հ/Հ 1510019896320100
Տնօրեն

Ա. ՇԱՀԻՆՅԱՆ _____
/ստորագրություն/

Կ.Տ.

Հավելված N 2
« 20 » 04 2026 թ. կնքված
ՀՀ-ՊԵԿ-ՀՄԱՊՁԲ-26/27-Ա ծածկագրով գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի																	
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Բյուջետային ծախսերի տնտ. դասակ. հոդվածը*	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2026թ. ՀՀ պետական բյուջեի միջոցներով նախատեսված հատկացումների հաշվին, ըստ ամիսների՝ ընդ որում													
				հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	**Ընդամենը**	
1	4267	39812600/1	Կենցաղային և հանրային սննդի նյութեր 1				167 040	167 040	167 040	167 040	167 040	167 040	167 040	167 040	167 040	**167 040**	
2	4267	39812600/3	Կենցաղային և հանրային սննդի նյութեր 2				83 520	83 520	83 520	83 520	83 520	83 520	83 520	83 520	83 520	**83 520**	
3	4267	39812600/2	Կենցաղային և հանրային սննդի նյութեր 3				83 520	83 520	83 520	83 520	83 520	83 520	83 520	83 520	83 520	**83 520**	
4	4267	33711480/6	Կենցաղային և հանրային սննդի նյութեր 4				65 000	65 000	65 000	65 000	65 000	65 000	65 000	65 000	65 000	**65 000**	
5	4267	33711480/3	Կենցաղային և հանրային սննդի նյութեր 5				65 000	65 000	65 000	65 000	65 000	65 000	65 000	65 000	65 000	**65 000**	
6	4267	33711480/5	Կենցաղային և հանրային սննդի նյութեր 6				52 000	52 000	52 000	52 000	52 000	52 000	52 000	52 000	52 000	**52 000**	
7	4267	33711480/4	Կենցաղային և հանրային սննդի նյութեր 7				65 000	65 000	65 000	65 000	65 000	65 000	65 000	65 000	65 000	**65 000**	

8	4267	33711480/7	Կենցաղային և հանրային սննդի նյութեր 8				13 000	13 000	13 000	13 000	13 000	13 000	13 000	13 000	13 000	**13 000**
9	4267	39811300/10	Կենցաղային և հանրային սննդի նյութեր 9				15 580	15 580	15 580	15 580	15 580	15 580	15 580	15 580	15 580	**15 580**
10	4267	39811300/5	Կենցաղային և հանրային սննդի նյութեր 10				15 580	15 580	15 580	15 580	15 580	15 580	15 580	15 580	15 580	**15 580**
11	4267	39811300/6	Կենցաղային և հանրային սննդի նյութեր 11				15 580	15 580	15 580	15 580	15 580	15 580	15 580	15 580	15 580	**15 580**
12	4267	39811300/11	Կենցաղային և հանրային սննդի նյութեր 12				15 580	15 580	15 580	15 580	15 580	15 580	15 580	15 580	15 580	**15 580**
13	4267	39811300/12	Կենցաղային և հանրային սննդի նյութեր 13				15 580	15 580	15 580	15 580	15 580	15 580	15 580	15 580	15 580	**15 580**
14	4267	39811300/4	Կենցաղային և հանրային սննդի նյութեր 14				15 580	15 580	15 580	15 580	15 580	15 580	15 580	15 580	15 580	**15 580**
15	4267	39811300/8	Կենցաղային և հանրային սննդի նյութեր 15				15 580	15 580	15 580	15 580	15 580	15 580	15 580	15 580	15 580	**15 580**
16	4267	39811300/7	Կենցաղային և հանրային սննդի նյութեր 16				15 580	15 580	15 580	15 580	15 580	15 580	15 580	15 580	15 580	**15 580**
17	4267	39811300/3	Կենցաղային և հանրային սննդի նյութեր 17				15 580	15 580	15 580	15 580	15 580	15 580	15 580	15 580	15 580	**15 580**
18	4267	39811300/13	Կենցաղային և հանրային սննդի նյութեր 18				15 580	15 580	15 580	15 580	15 580	15 580	15 580	15 580	15 580	**15 580**

19	4267	39811300/9	Կենցաղային և հանրային սննդի նյութեր 19				15 580	15 580	15 580	15 580	15 580	15 580	15 580	15 580	15 580	**15 580**
20	4267	39812600/4	Կենցաղային և հանրային սննդի նյութեր 20				85 590	85 590	85 590	85 590	85 590	85 590	85 590	85 590	85 590	**85 590**
21	4267	18931180/1	Կենցաղային և հանրային սննդի նյութեր 21				214 520	214 520	214 520	214 520	214 520	214 520	214 520	214 520	214 520	**214 520**
22	4267	33141156/1	Կենցաղային և հանրային սննդի նյութեր 22				8 000	8 000	8 000	8 000	8 000	8 000	8 000	8 000	8 000	**8 000**
23	4267	39812600/5	Կենցաղային և հանրային սննդի նյութեր 23				41 710	41 710	41 710	41 710	41 710	41 710	41 710	41 710	41 710	**41 710**
24	4267	18931180/2	Կենցաղային և հանրային սննդի նյութեր 24				10 750	10 750	10 750	10 750	10 750	10 750	10 750	10 750	10 750	**10 750**
25	4267	33761100/5	Կենցաղային և հանրային սննդի նյութեր 25				471 960	471 960	471 960	471 960	471 960	471 960	471 960	471 960	471 960	**471 960**
26	4267	39522330/2	Կենցաղային և հանրային սննդի նյութեր 26				168 000	168 000	168 000	168 000	168 000	168 000	168 000	168 000	168 000	**168 000**
27	4267	33141156/2	Կենցաղային և հանրային սննդի նյութեր 27				39 200	39 200	39 200	39 200	39 200	39 200	39 200	39 200	39 200	**39 200**
28	4267	39522330/3	Կենցաղային և հանրային սննդի նյութեր 28				41 760	41 760	41 760	41 760	41 760	41 760	41 760	41 760	41 760	**41 760**
29	4267	39812600/6	Կենցաղային և հանրային սննդի նյութեր 29				153 700	153 700	153 700	153 700	153 700	153 700	153 700	153 700	153 700	**153 700**

30	4267	33141170/4	Կենցաղային և հանրային սննդի նյութեր 30				240 840	240 840	240 840	240 840	240 840	240 840	240 840	240 840	240 840	**240 840**
31	4267	33761100/6	Կենցաղային և հանրային սննդի նյութեր 31				1 181 920	1 181 920	1 181 920	1 181 920	1 181 920	1 181 920	1 181 920	1 181 920	1 181 920	**1 181 920**
32	4267	39522250/1	Կենցաղային և հանրային սննդի նյութեր 32				132 000	132 000	132 000	132 000	132 000	132 000	132 000	132 000	132 000	**132 000**
33	4267	39221410/2	Կենցաղային և հանրային սննդի նյութեր 33				154 080	154 080	154 080	154 080	154 080	154 080	154 080	154 080	154 080	**154 080**

ԳՆՈՐԴ

ՀՀ պետական եկամուտների կոմիտե
ք. Երևան, Մ. Խորենացի 3,7
ՀՎՀՀ 02647057
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011054013
ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղար

Դ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ _____
/ստորագրություն/

Կ.S.

ՎԱՃԱՌՈՂ

«ՆԱՐ-ԱՌ» ՍՊԸ
ք. Երևան, Սևանի 5/1
ՀՎՀՀ 01542102
Արարատբանկ ԲԲԸ

Հ/Հ 15100198963201 00
Տնօրեն

Ա. ՇԱՀԻՆՅԱՆ _____
/ստորագրություն/

Կ.S.

Հավելված N 3
«20» 04 2026 թ. կնքված
ՀՀ-ՊԵԿ-ՀՄԱՊՁԲ-26/27-Ա ծածկագրով գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«20» 04 2026 թ. կնքված
ՀՀ-ՊԵԿ-ՀՄԱՊՁԲ-26/27-Ա ծածկագրով գնման պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը

(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Հավելված N 4
«20» 04 2026 թ. կնքված
ՀՀ-ՊԵԿ-ՀՄԱՊՁԲ-26/27-Ա ծածկագրով գնման պայմանագրի

ԾԱՆՈՒՑՈՒՄ

_____ հայտնում է, որ .
ֆինանսական գործակալի անվանումը

1. _____-ի և _____-ի միջև «--» 20 թ. կնքված
գնորդի անվանումը վաճառողի անվանումը

ՀՀ-ՊԵԿ-ՀՄԱՊՁԲ-26/25-Ք ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակում իր և

_____-ի միջև «--» 20 թ-ին կնքվել է «----------» ծածկագրով ֆակտորինգի
վաճառողի անվանումը
պայմանագիրը,

2. համաձայն է Պայմանագրի 8.12 կետով սահմանված պահանջներին:

_____
ֆինանսական գործակալի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)

_____
ստորագրությունը

Կ. Տ. (առկայության դեպքում)

«--» 20 թ.